# ԲԱՁՄԱՉԱՓ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ

Լոռիում, Շիրակում և Տավուշում համայնքային մակարդակով իրականացված հետազոտություն

Ռայան Մեթյուս, Հետազոտության և զարգացման պատասխանատու, ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամ
ryan.matthews@crrc.am

Սաթենիկ Ղազարյան, Հետազոտությունների վերլուծաբան, ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամ
satenik.ghazaryan@crrc.am

*This publication was produced with the financial support of the European Union. Its contents are the sole responsibility of CRRC-Armenia and do not necessarily reflect the views of the European Union.*

*Այս հրապարակումը պատրաստվել Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամ կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:*

# ԱԿՆԱՐԿ

- ՀՌԿԿ-Հայաստանը փորձնական հետազոտություն է անցկացրել Լոռի, Շիրակ և Տավուշ հյուսիսային երեք մարզերում բազմաչափ աղքատությունը և Քովիդ-19-ի նկատմամբ խոցելիությունը համայնքային մակարդակում չափելու նպատակով:
- Այն հիմնված է բազմաչափ աղքատության չափման Ալկիր-Ֆոսթերի (ԱՖ) մեթոդաբանության վրա:
- ԱՖ մեթոդը կիրառվում է Համաշխարհային բանկի կողմից ազգային մակարդակում Բազմաչափ աղքատության ինդեքսը (ԲԱԻ) հաշվարկելու համար: ՀՌԿԿ-Հայաստանն իր հերթին այս մեթոդը առաջին անգամ կիրառել է *համայնքային* մակարդակում ԲԱԻ և Քովիդ 19-ի նկատմամբ խոցելիության ինդեքսը (ՔԽԻ) հաշվարկելու համար:
- Հարցաթերթը կազմվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների կենսամարդակի ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) հարցաթերթի հիման վրա: Համաշխարհային բանկը ԲԱԻ-ն ազգային մակարդակում հաշվարկելիս օգտվում է ՏՏԿԱՀ-ի տվյալադարանից:
- Ընտրանքը կազմել է շուրջ 2,400 հարցվող (պատահականորեն ընտրված):
- Դաշտային աշխատանքներն իրականացվել են 2021թվականի հուլիս-օգոստոս ամիսներին:



[1]Համայնքային հասկացությունը չի համընկնում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից սահմանված խոշորացված համայնքների հետ:

# ԱԿՆԱՐԿ

- Հետազոտության տվյալները բաժանվել են ըստ ութ (8) կոնկրետ համայնքների՝ համայնքային մակարդակի ԲԱԻ-ն ու ՔԽԻ ստանալու համար: Այն մանրակրկիտ կերպով անդրադառնում է Լոռու, Շիրակի և Տավուշի համայնքների վրա ազդող խնդիրներին:
- Ութ համայնքները հետևյալն են՝
  - (1) Տավուշի գյուղական համայնքները, (2) Տավուշի քաղաքային համայնքները (բացի Իջևանից), (3) Իջևանը, (4) Շիրակի գյուղական համայնքները, (5) Գյումրին, (6) Լոռու գյուղական համայնքները, (7) Սպիտակն ու (8) Վանաձորը:

[2]Ամբողջ ներկայացման մեջ «համայնք» ասելով նկատի ունենք նշված բաժանումը:

# ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԲԱԶՄԱԿԻ ՉԱՓԱԿԱՆՈՒԹՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

- Աղքատությունը սովորաբար գնահատվում է մեկ չափականությամբ՝ եկամտով կամ սպառմամբ, սակայն բազմաչափ աղքատության ինդեքսը հնարավորություն է տալիս անդրադառնալ աղքատությանը հանգեցնող բազմաթիվ գործոններին:
- ԱՖ մեթոդաբանությամբ գնահատված ԲԱԻ-ը ուղղված է ծայրագույն աղքատության չափմանը:
  - Ծայրագույն աղքատությունը վերաբերում է 1) այն մարդկանց, ովքեր ապրում են հիմնական կենսագործունեության ցուցանիշների մասով միջազգայնորեն համաձայնեցված նվազագույն չափանիշներին չհամապատասխանող պայմաններում, և 2) նրանց, ովքեր ապրում են միաժամանակ մի քանի գործոններով նվազագույն չափանիշներին չհամապատասխանող պայմաններում:
- Ավելի պարզեցված, ԲԱԻ-ն չափում է անհատների և ՏՏ-ների աղքատությունն ըստ բազմաթիվ զրկանքների, ինչպիսիք են՝ թերսնված լինելը, մաքուր խմելու ջրի անհասանելիությունը, անբավարար սանիտարական պայմանները, ոչ մաքուր վառելիքը և այլն:



[3]«Ծայրագույն աղքատության» սահմանումը վերցված է Ալկիր, Ս. և Սանտոս, Մ. Ե. (2011) հոդվածից. Մարդկային զարգացման ազգային զեկույցների պատրաստման ուսումնական նյութ. Բազմաչափ աղքատության ինդեքս *(ԲԱԻ)*:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

# ԲԱՀ/ՔԽՀ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՍԽԵՄԱ



# ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԲԱԶՄԱԿԻ ՉԱՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

- ԲԱԻ-ի չափման համար ներառվել են հինգ չափականություններ (ՀԲ-ի մոտեցման համաձայն): Յուրաքանչյուր չափականություն ունի ցուցանիշների և դրանց հարակից հարցերի իր հավաքածուն՝ հիմնված Հայաստանում աղքատության համատեքստի վրա:
  - **Հիմնական կարիքներ**
    - *Ցուցանիշներ.* (1) Արժանապատիվ կյանք, (2) Մարդասիրական օգնություն, (3) Փոխանցումներից կախվածություն, (4) Ծայրահեղ (պարենային) աղքատություն
  - **Բնակարանային պայմաններ**
    - *Ցուցանիշներ. (*1) Սուբյեկտիվ բնակարանային պայմաններ, (2) Պատշաճ բնակարանային պայմաններ, (3) Գերբնակեցում, (4) Առողջ ջեռուցում, (5) Կենտրոնացված ջրամատակարարման համակարգի մշտական հասանելիություն, (6) Կենտրոնացված ջրահեռացում և աղբահանություն, (7) Հոսող տաք ջուր, (8) Հանրային ծառայությունների որակ, (9) Տրանսպորտի հասանելիություն
  - **Կրթություն**
    - *Ցուցանիշներ. 1*) Միջնակարգ կրթություն, 2) Կրթական հաստատություն պարտադիր հաճախում, 3) Որակյալ կրթական ծառայություններ, 4) Կրթության հասանելիություն
  - **Աշխատանք**
    - *Ցուցանիշներ.* (1) Աշխատաշուկայի մասնակցություն; (2) Երկարաժամկետ գործազրկություն; (3) Արժանապատիվ աշխատատեղ
  - **Առողջապահություն**
    - *Ցուցանիշներ.* (1) Առողջապահական ծառայությունների մատչելիություն, (2) Սովորական գործունեության դադարեցում, (3) Առողջապահական ծառայությունների հասանելիություն, (4) Առողջապահական ծառայությունների որակ

# ԲԱԶՄԱՉԱՓ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

**Ընտրել**

ա) Վերլուծության միավորը. ՏՏ կամ անհատի մակարդակ
բ) Չափականություններ. հետաքրքրող թեմաներ
գ) Ցուցանիշներ. դրանց արդյունքներ

**Սահմանել**

ա) Յուրաքանչյուր ցուցանիշի համար զրկանքի գիծը
բ) Ցուցանիշների կշիռները. կառուցել բաղադրյալ ինդեքս
գ) Աղքատության գիծը. նույնականացնել բազմաչափ աղքատին

**Հաշվարկել**

ա) Աղքատության մակարդակի համաթիվ. բազմաչափ աղքատների մասնաբաժինը երկրում կամ տարածաշրջանում
բ) Աղքատության բացը. բազմաչափ աղքատների զրկանքների միջին թիվը
գ) Ճշգրտված համաթիվը. միավորում է աղքատության մակարդակի համաթիվն ու աղքատության բացը ԲԱԻ-ի մեջ



*Գրաֆիկը վերցված է Մորից Մեյերի «Բարեկեցության չափումը» ներկայացումից/ Համաշխարհային բանկ*

# ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ

| Հարցման կարճ փաստեր | Տվյալներ | Նշումներ |
|---|---|---|
| Դաշտային աշխատանքն իրականացնող կազմակերպություն | ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամ | |
| Դաշտային աշխատանքի ժամանահատվածը | 29 Հուլիս 2021 – 23 Օգոստոս 2021 | |
| Ընտրանքի շրջանակը | ՀՀ ընտրական տեղամասերի ցուցակ | |
| Ընտրանքի ծավալ | n=2406 | |
| Թիրախային բնակչությունը | Հայաստանի հանրապետության քաղաքացիներ | |
| Թիրախային բնակչության թիվը | 426,930 (18+ տարիքի մարդիկ) | |
| Հետազոտության տեսակը | Տարածաշրջանային | |
| Ընտրանքի մեթոդը | Կլաստերային շերտավորված պատահական ընտրանք | |
| Սխալի սահման | +/- 2% | 95% վստահության միջակայք |
| Հարցման մեթոդը (տեսակը) | CAPI | |
| Պատասխանի տոկոսը | 34% | |
| Հարցման լեզուն | Հայերեն | |
| Կշռի գործոններ | Հաշվարկվել են անհատական և SS մակարդակների կշիռները | |

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ՏՎՅԱԼՆԵՐ - ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

| | | Հաճախությունը/ Հարցման քանակը | Տոկոս | Վավեր տոկոս | Կուտակային տոկոս |
|---|---|---|---|---|---|
| Վավեր | Վանաձոր | 354 | 14.7 | 14.8 | 14.8 |
| | Սպիտակ | 125 | 5.2 | 5.2 | 20.0 |
| | Լոռու գյուղական համայնքներ | 329 | 13.7 | 13.7 | 33.7 |
| | Գյումրի | 469 | 19.5 | 19.6 | 53.3 |
| | Շիրակի գյուղական համայնքներ | 316 | 13.1 | 13.2 | 66.5 |
| | Իջևան | 141 | 5.9 | 5.9 | 72.4 |
| | Տավուշի քաղաքային համայնքներ (բացի Իջևանից) | 202 | 8.4 | 8.4 | 80.8 |
| | Տավուշի գյուղական համայնքներ | 460 | 19.1 | 19.2 | 100.0 |
| | Ընդամենը | 2396 | 99.6 | 100.0 | |
| Բացակա | Համակարգում | 10 | .4 | | |
| Ընդամենը | | 2406 | 100.0 | | |

# ԲԱԶՄԱՉԱՓ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ (ԲԱԻ)

## Ընդհանուր թվերն ըստ մարզերի և համայնքների

*Չրկանք կրող ՏՏ-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*




***ԲԱԻ-ն 2020-ին (հաշվարկված Համաշխարհային բանկի կողմից)***

*2021 թվականի նոյեմբերին հրապարակված «Սոցիալական պատկերը և աղքատությունը Հայաստանում 2021» զեկույցի համաձայն՝ Հայաստանի ազգային մակարդակով ԲԱԻ-ն 2020 թվականին հանրապետական մակարդակում կազմել է 19,1%, ընդ որում Երևանում՝ 16,4%, այլ քաղաքային համայնքներում՝ 16,0%, գյուղական համայնքներում՝ 23,2%:*

# ԲԱՁՄԱՉԱՓ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍՆ (ԲԱԻ) ԸՍՏ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ

**ԲԱԻ ոլորտներն ըստ ցուցանիշների**

Ընտրված 24 ցուցանիշների շարքում աղքատության մակարդակն ամենաբարձրն է արժանապատիվ կյանք, առողջ ջեռուցում, աշխատաշուկայի մասնակցություն և արժանապատիվ աշխատատեղ ցուցանիշների համար:




*Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումը բոլոր երեք մարզերով*

# ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

**Արժանապատիվ կյանք**

Այս ցուցանիշը վերաբերում է նրան, թե արդյոք տվյալ ՏՏ-ն կարող է թույլ տալ իրեն գնել սնունդ կամ հագուստ: ՏՏ-ն համարվում էր աղքատ, եթե հարցվողները նշում էին, որ բավարար գումար չկա ամենօրյա սննդի կամ հագուստի համար:

*Չրկանք կրող ՏՏ-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



# ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

**Արժանապատիվ կյանք**

*Նախորդ 12 ամիսների ընթացքում գումարի կամ այլ միջոցների բացակայության պատճառով եղե՞լ է այնպիսի պահ, երբ Դուք կամ Ձեր ընտանիքի մյուս անդամները մի ամբողջ օր չեք սնվել:*



# ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

**Արժանապատիվ կյանք**

*Ձեր տնային տնտեսությունը կարո՞ղ է թույլ տալ օրը մեջ մսով, հավով, ձկով (կամ համարժեք բուսակերային) կերակուր ուտել:*



# ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

**Արժանապատիվ կյանք**

*Ձեր տնային տնտեսությունը կարո՞ղ է թույլ տալ մեկշաբաթյա տարեկան արձակուրդի մեկնել այլ վայր, այդ թվում՝ մնալ երկրորդ կացարանում կամ ընկերների/բարեկամների հետ (ողջ տնային տնտեսությունը):*



# ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

**Արժանապատիվ կյանք**

*Ձեր տնային տնտեսության ընդհանուր եկամուտը բավարարու՞մ է ամսական պահանջվող նվազագույն ծախսերը հոգալու համար:*






*Նշում. Համայնքներում «շատ հեշտությամբ» պատասխանը տվել է SS-ների 2,4%-ից ոչ ավելին:

# ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

**Արժանապատիվ կյանք**

*Ունե՞ք ոտքին համապատասխան երկու զույգ կոշիկ, որոնք նաև բավարար են տարվա տարբեր եղանակներին հագնելու համար:*



# ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

**Արժանապատիվ կյանք**

*Որո՞նք են Ձեր տնային տնտեսության 3 հիմնական խնդիրները: Թվարկեք ըստ կարևորության:*



# ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

**Մարդասիրական օգնություն**

Մարդասիրական օգնության ցուցանիշը վերաբերում էր մարդասիրական օգնություն ստացած ՏՏ-ներին: ՏՏ-ն համարվում է աղքատ, եթե վերջին 12 ամիսների ընթացքում ստացել է նման օգնություն:

*Չրկանք կրող ՏՏ-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



# ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

**Մարդասիրական օգնություն**

*Ձեր ընտանիքը հաշվառվա՞ծ է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում:*



# ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

## Մարդասիրական օգնություն

*Ո՞րն է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում Ձեր ընտանիքի չհաշվառվելու հիմնական պատճառը:*



# ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

**Մարդասիրական օգնություն**

*Նախորդ 12 ամիսների ընթացքում ընտանիքների անապահովության գնահատման համակարգի նպաստներից բացի, մարդասիրական օգնություն ստացե՞լ եք:*



# ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

## Դրամական փոխանցումներից կախվածություն

*Դրամական փոխանցումներից կախվածության ցուցանիշը վերաբերում է այն ՏՏ-ներին, որոնց սպառման մակարդակն ավելի ցածր է, քան պարենային աղքատության շեմը՝ փոխանցումները նվազեցնելուց հետո: Նման տնային տնտեսությունները համարվել են աղքատ: Աղքատ են համարվել նաև փոխանցումներ չստացած, բայց աղքատության պարենային շեմից քիչ սպառում ունեցած ՏՏ-ները:*

*Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



# ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

**Ծայրահեղ (պարենային) աղքատություն**

*Ծայրահեղ (պարենային) աղքատության ցուցանիշը ցույց է տալիս, թե արդյոք չափահասների սպառումը պարենային աղքատության ազգային շեմից բարձր է, թե ցածր: ՏՏ-ն համարվում է աղքատ, եթե չափահասների սպառումը ցածր է պարենային աղքատության շեմից (արտահայտված դրամով):*

*Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

# ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

## Եզրակացություններ

Լոռու մարզն ամենաանապահովն է (71.3%) առօրյա սննդի և հագուստի համար բավարար գումար չունենալու առումով: Այս ցուցանիշով ամենաանապահովը Սպիտակն է (80.1%):

Մսով կամ համարժեք բուսական սննդով սնվելու հնարավորության համեմատ (Սպիտակում SS-ների 83,7%-ը, Իջևանի SS-ների 74,3%-ը դա չէր կարող իրենց թույլ տալ), գումարի կամ այլ ռեսուրսների սղության պատճառով, զգալիորեն ավելի քիչ մարդ է առանց սնվելու մի ամբողջ օր անցկացրել:

SS-ների 80%-ից ավելին հայտնել են, որ չեն կարող իրենց թույլ տալ մեկշաբաթյա ամենամյա արձակուրդ վերցնել տնից հեռու այլ վայրում (ներառյալ որևէ երկրորդ կացարանում, կամ ընկերների/բարեկամների հետ մնալը):

•Շատ քիչ համայնքներ (ըստ էության՝ 2,4%-ից պակաս) են նշել, որ ի վիճակի են կոմունալ վճարումները կատարել «հեշտությամբ» կամ «շատ հեշտությամբ»:

•Սպիտակի (28.5%), Լոռու գյուղական համայնքների (27.8%), Իջևանի (30.9%), Տավուշի քաղաքային համայնքների (25.9%) և Տավուշի գյուղական համայնքների (33.3%) SS-ների շուրջ 25-30%-ը հայտնել է, որ չունի երկու զույգ պատշաճ կոշիկ, որ բավարար լինի տարվա տարբեր եղանակներին կրելու համար:

SS-ների վաթսունհինգ (65%) և ավելի տոկոսը գրանցված չեն եղել աղքատության նպաստների համակարգում, իսկ շուրջ 15.2%-ը (Շիրակի գյուղական շրջաններում) և 34.1%-ը (Սպիտակում) գրանցված են եղել համակարգում: Ընտանիքների մեծ մասը (սովորաբար Տավուշի քաղաքային համայնքներում՝ 60.1%, և Շիրակի գյուղերում՝ 49.1%) հաշվառված չեն եղել համակարգում, քանի որ չեն բավարարել համակարգի պայմանները:

Դրամական փոխանցումներից կախվածությունն ավելի բարձր է եղել Իջևանում, Տավուշում (և քաղաքային, և գյուղական համայնքներում) և Գյումրիում:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

# ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ

## Առաջարկություններ

Թեև Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի բոլոր համայնքները խոցելի էին «Արժանապատիվ կյանք» ԲԱ չափականությունում, այնուամենայնիվ Լոռու մարզը և հատկապես Սպիտակը պետք է առաջնահերթություն ստանան տնային տնտեսությունների (ՏՏ)՝ առօրյա սննդի և հագուստի համար գումար չունենալու խնդրի դեմ պայքարելու հարցում:

Լոռուն, Շիրակին և Տավուշին արժանապատիվ կյանքի հասնելու գործում օժանդակելու համար անհրաժեշտ է առաջնահերթություն տալ հանրային առողջ սնուցմանը՝ որպես հանրային քաղաքականության կարևոր ոլորտ և սոցիալական ձեռներեցության առարկա: Մասնավորապես, ՄԱԿ-ի ՊՀԾ-ի՝ «Դպրոցական սնունդ» ծրագիրը կարող է ավելի մեծ ուշադրություն դարձնել Սպիտակի և Իջևանի դպրոցներին: Միևնույն ժամանակ, բոլոր երեք մարզերը, հատկապես Լոռին, կարող են օգուտ քաղել սնուցման հիմունքների վերաբերյալ քաղաքացիների համար դասընթացներից:

Ակնհայտ է, որ համայնքների մշակութային կյանքը պետք է բարելավվի: Բազմաչափ աղքատության դեմ պայքարելու համար կարևոր նշանակություն կունենան սոցիալական նախաձեռնությունները, որոնք նորարարական լուծումներ կարող են առաջարկել տոների կազմակերպման համար՝ հատկապես Լոռու, Շիրակի և Տավուշի գյուղական համայնքներում, ինչպես նաև Սպիտակում: Տեղական ՔՀԿ-ները և ՏԻՄ-երը պետք է առավել մեծ ուշադրություն դարձնեն համայնքների սոցիալական և մշակութային կյանքի ակտիվացման խնդրին՝ տոները նշելու, ինչպես նաև այնպիսի համայնքային նախաձեռնությունների կազմակերպման առումով, որոնք կարող են նշանավորել տոնակատարություններին ու քաղաքացիների համախմբվածությունը:

Թեև կոմունալ ծառայությունների վճարումը դրամական եկամտի խնդիր է, կոմունալ ծառայությունների կառավարման ոչ դրամական ասպեկտները (գիտակցելով, թե ինչպես են էներգիայի, թափոնների և ջրի օգտագործման տարբեր մետրիկաներն ազդում ՏՏ-ների/բիզնեսի վրա) կարող են կարևոր լինել Լոռու, Շիրակի և Տավուշի ՏՏ-ների համար: Սա բնակչության ֆինանսական գրագիտության մաս է կազմում, այն է՝ հասկանալ ինչպես օգտվել կոմունալ ծառայություններից և դրանց դիմաց վճարելիս իմանալ իրենց իրավունքները: Անհրաժեշտ ուշադրություն է պետք դարձնել հասարակության շրջանում իրազեկման արշավներին և վերապատրաստումներին, որոնք վերաբերում են կոմունալ ծառայությունների այս ասպեկտին, հատկապես Լոռու (60.6%) և Շիրակի (62.7%) գյուղական համայնքներում, ինչպես նաև Սպիտակում (68.3%), որտեղ մարդիկ մեծ դժվարությամբ են վճարում կոմունալ ծառայությունների դիմաց:

Ընդգծել որպես բիզնես կոշիկի արտադրության կարևորությունը մարզերի համար, համոզվել, որ Հայաստանի կոշիկի հաջողակ բիզնեսները տեղյակ են խնդրի մասին: Կոշկակարությունը/վերանորոգումը կարող է նաև դիտարկվել որպես արվեստին առնչվող տեղայնացված և կարևոր մասնագիտություն, որը կարող է առաջնահերթություն լինել ՆՄՄԿՈՒ-ների կողմից տվյալ տարածքում: Սա կարող է ճիշտ ուղղություն լինել նաև ցանկացած սոցիալական ձեռնարկության համար: Կարևոր կարող են լինել նաև էլ. մարքեթինգի/էլ. հավելվածների վրա հիմնված նախաձեռնությունները:

Բազմաչափ աղքատությունը և աղքատության նպաստների համակարգից օգտվելու իրավունք տվող պայմանների բավարարումը պետք է գնահատվեն և համեմատվեն միմյանց հետ: Այս նպատակն արդեն իսկ հասցեագրվել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Միասին հանուն սոցիալական համայնքների. ամուր տեղական գործընկերություն և կարող ՔՀԿ-ներ ի նպաստ Հայաստանում ներառական սոցիալական պաշտպանության և հաշվետու համայնքների» ծրագրով:

Միգրացիայի կանխարգելման ցանկացած ծրագրով կարելի է թիրախավորել Իջևանը, Տավուշը (ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական համայնքները) և Գյումրին: Այս բացահայտումը կարող է կարևոր լինել Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ՄՔՄՄԿ) համար, որը ներկայումս դիտարկում է միգրացիայի կանխարգելման ենթադրամաշնորհային սխեմաներ և այլ նմանատիպ ծրագրեր/նախագծեր՝ ԵՄ ֆինանսավորմամբ:

# ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**Սուբյեկտիվ բնակարանային պայմաններ**

*Սուբյեկտիվ բնակարանային պայմանների ցուցանիշով ՏՏ-ները համարվել են աղքատ, եթե իրենց բնակարանային պայմանները բնութագրել են որպես «վատ» կամ «շատ վատ»:*

*Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



# ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**Համապատասխան բնակարանային պայմաններ**

*Համապատասխան բնակարանային պայմանների գործոնի համաձայն՝ ՏՏ-ները համարվել են աղքատ, եթե դժգոհություն են արտահայտել իրենց բնակարանային պայմանների և բնակվելու միջավայրի վերաբերյալ հարցերի առնվազն մեկ երրորդի մասով. հատակի մակերես, հարևաններից կամ դրսից աղմուկ, լուսավորություն, ջեռուցում, խոնավություն, տանիքից կաթոց, խարխուլ պատեր, ինչպես նաև հատակներ, խարխուլ պատուհանների շրջանակներ և դռներ, դժվար երթևեկություն, արդյունաբերական աղտոտվածություն, վերելակների ֆունկցիոնալություն, ջրի որակ, աղբահանություն և ընդհանուր տարածքների և բակերի համար ծառայություններ:*

*Չրկանք կրող ՏՏ-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



# ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**Գերբնակեցում**

*Այս ցուցանիշը վերաբերում է այն SS-ներին, որոնց անդամները, համաձայն Եվրոստատի սահմանման, ապրում են գերբնակեցված պայմաններում: SS-ն համարվել է գերբնակեցված, եթե բացակայել է հետևյալ պայմաններից որևէ մեկը՝ (1) մեկ սենյակ SS համար, (2) մեկ սենյակ ընտանիքի յուրաքանչյուր ամուսնական զույգի համար, (3) մեկ սենյակ 18-ից բարձր յուրաքանչյուր SS անդամի համար, (4) մեկ սենյակ 12-ից 17 տարեկան նույն սեռի երկու SS անդամի համար, (5) մեկ սենյակ 12-ից 17 տարեկան յուրաքանչյուր SS անդամի համար, որը ընդգրկված չէ նախորդ խմբում, (6) մեկ սենյակ մինչև 12 տարեկան երկու երեխաների համար: Սենյակները չեն ներառել լոգարանները, զուգարանները կամ խոհանոցները:*

*Չրկանք կրող SS-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



# ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**Առողջ ջեռուցում**

*Առողջ ջեռուցման ցուցանիշը վերաբերում է այն ՏՏ-ներին, որոնց ջեռուցման հիմնական աղբյուրը համարվում է առողջությանը վնասակար: Աղքատ են համարվել այն ՏՏ-ները, որոնք ջեռուցվել են նավթով և դիզելային վառելիքով, փայտով կամ ցանկացած այլ աղբյուրով բացի էլեկտրաէներգիայով, բնական գազով կամ հեղուկ գազով աշխատող կենտրոնացված ջեռուցման համակարգից:*

*Չրկանք կրող ՏՏ-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



# ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

## Առողջ ջեռուցում

*Ի՞նչ մեթոդով եք հիմնականում ջեռուցում կացարանը:*




*«Այլ» կատեգորիան ներառում է էլեկտրական վառարան, գազօջախ, ածուխով աշխատող ինքնաշեն ջեռուցիչ, ածուխով աշխատող ինքնաշեն ջեռուցիչ (կենտրոնական ջեռուցում), թրիքով աշխատող ինքնաշեն ջեռուցիչ, տեղական կոլեկտիվ բլոկի կաթսա, արևային կուտակիչ և չեն ջեռուցել բնակարան պատասխանները:*

# ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**Կենտրոնացված ջրային համակարգին շարունակական հասանելիություն**

Այս ցուցանիշի նպատակը կենտրոնացված ջրամատակարարման համակարգերի հասանելիություն չունեցող ՏՏ-ների և համակարգին հասանելիության որակի բացահայտումն է: Այն ՏՏ-ները, որոնք ամսվա յուրաքանչյուր օրվա և օրվա յուրաքանչյուր ժամի կենտրոնացված ջրամատակարարման հնարավորություն չեն ունեցել, համարվել են զրկանք կրող:

*Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



# ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

## Կենտրոնացված ջրահեռացում և աղբահանություն

Կենտրոնացված ջրահեռացում և աղբահանության ցուցանիշը վերաբերել է այն ՏՏ-ներին, որոնք չեն ունեցել կենտրոնացված ջրահեռացման համակարգ կամ աղբահանություն, ինչպիսիք են աղբահավաք մեքենաների օգնությամբ կենտրոնացված աղբահանությունը: Այն ՏՏ-ները, որոնք օգտվել են աղբահանության այլ տարբերակներից կամ չեն ունեցել գործող կենտրոնացված ջրահեռացման համակարգ, համարվել են զրկանք կրող:

*Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



# ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**Հոսող տաք ջուր**

Հոսող տաք ջրի ցուցանիշը վերաբերում է այն ՏՏ-ներին, որոնց հոսող տաք ջուրը հասանելի չէ:

*Չրկանք կրող ՏՏ-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



# ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

## Հասարակական ծառայությունների որակ

Այս ցուցանիշը ցույց է տալիս, թե որքանով են բավարարված SS-ները ինը տարբեր հանրային ծառայություններով՝ ջրամատակարարում, մաքրություն, աղբահանություն, հեռախոս, էլեկտրաէներգիա, փոստ, բանկային ծառայություն, ոռոգում և հասարակական տրանսպորտ: Այն SS-ները, որոնք չեն բավարարվել իրենց գնահատած հանրային ծառայությունների ավելի քան մեկ երրորդով, համարվել են զրկանք կրող:

*Զրկանք կրող SS-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



# ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**Տրանսպորտի հասանելիություն**

Այս ցուցանիշը բացահայտում է այն ՏՏ-ները, որոնք իրենց բնակավայրերում կամ մարզային քաղաքներ կամ շուկաներ տանող ճանապարհները նկարագրել են վատ որակ ունեցող: Քաղաքային բնակավայրերի ՏՏ-ներին այս հարցը չի տրվել և այդ իսկ պատճառով էլ վերջիններս զրկանք կրող չեն համարվել:

*Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*գյուղական համայնքների*



# ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**Տրանսպորտի հասանելիություն**

*Ինչպե՞ս կգնահատեք Ձեր բնակավայրի ներհամայնքային ճանապարհների որակը*



# ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

## Տրանսպորտի հասանելիություն

*Ինչպե՞ս կգնահատեք Ձեր բնակավայրը մարզկենտրոնին, քաղաքներին, շուկաներին կապող ճանապարհների որակը:*



# ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

## Եզրակացություններ

Մարզերի ՏՏ-ներում գերակշռում են բնակարանային և առողջապահական խնդիրները: Պարզվել է, որ կենտրոնացված ջրամատակարարման համակարգին շարունակական մուտքն ավելի խնդրահարույց է Լոռու (28.6%, Լոռու գյուղական համայնքների համար՝ 30.6%) և Տավուշի (27.7%, Տավուշի գյուղական համայնքների համար՝ 40.9%), քան Շիրակի (10%) համար: Քաղաքային բնակավայրերի մասով, Սպիտակի (29.1%) և Վանաձորի (26.8%) ՏՏ-ները նշել են կենտրոնացված ջրամատակարարման համակարգին շարունակական հասանելիության հետ կապված խնդիրներ: Շիրակի համար աղբահանությունն արձանագրվել է որպես կարևոր խնդիր (35.5% զրկվածություն Շիրակի գյուղական հատվածում): Շիրակի գյուղական ՏՏ-ների շրջանում ամենամեծ զրկվածությունը (37.6%) արձանագրվել է հանրային ծառայությունների որակի մասով (ջրամատակարարում, ջրահեռացում, աղբահանություն, էլեկտրամատակարարում և այլն):

## Առաջարկություններ

Առողջ ջեռուցումն ու տաք հոսող ջուրը երկու ամենակարևոր բնակարանային խնդիրներն են, որոնք առաջնահերթ հասցեագրման կարիք ունեն մարզերում: Ինչպես սնուցման դեպքում, առողջ ջեռուցումը ևս մեկ թեմա է հանրային իրազեկման բարձրացման, ինչպես նաև ՀՀ Առողջապահության, էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունների քաղաքականու-թյունների համար:

# ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

**Միջնակարգ կրթություն**

Միջնակարգ կրթության ցուցանիշը բացահայտում է այն ՏՏ-ները, որոնց որևէ անդամ, ով 15 տարեկան է կամ ավելի մեծ, չունի միջնակարգ կրթություն:

*Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



# ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

**Կրթական հաստատություն պարտադիր հաճախում**

Կրթական հաստատություն պարտադիր հաճախում ցուցանիշը մատնանշել է այն ՏՏ-ները, որոնք ունեցել են պարտադիր դպրոցական տարիքի առնվազն մեկ երեխա (6-17 տարեկան), որը դպրոց չի հաճախել: Այդ տարիքի երեխա չունեցող ՏՏ-ներն զրկանք կրող չեն համարվել:

*Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



# ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

**Կրթական ծառայությունների որակ**

Այս ցուցանիշը բացահայտում է այն ՏՏ-ները, որոնք բավարարված չեն կրթական համակարգով:

*Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



# ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

## Կրթության հասանելիություն

Կրթության հասանելիության ցուցանիշը վերաբերում է այն ՏՏ-ներին, որոնք չեն ունեցել կրթական ծառայություններին համապատասխան հասանելիություն: Եթե մանկապարտեզ, տարրական կամ միջնակարգ դպրոց հաճախելու համար որևէ երեխա ծախսում է ավելի քան 30 րոպե քայլելու կամ հեծանիվ վարելու համար, ապա տվյալ ՏՏ-ն համարվել է զրկանք կրող: ՏՏ-ները համարվել են զրկանք կրող նաև այն դեպքում, երբ որևէ երեխա մեկ ժամից ավելի է ծախսել տրանսպորտի այլ միջոցներով դպրոց գնալու համար: Քաղաքային ՏՏ-ներին այս հարցը չի տրվել և վերջիններս չեն համարվել զրկանք կրող:

*Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*գյուղական համայնքների*



# ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

## Ամփոփում

Կրթությունն այն ոլորտն է, որի մասով արձանագրվել են նվազագույն զրկանքները: Կարևոր բացահայտումներից մեկն այն էր, որ Շիրակի գյուղական ՏՏ-ները (25.7%) նշել են, որ իրենց երեխաները 30 րոպեից ավելի են ծախսել ուսումնական հաստատություններ հասնելու համար, մինչդեռ Տավուշի գյուղական համայնքներում այդ ցուցանիշը կազմել է 17.8%, իսկ Լոռու գյուղական համայնքներում՝ 12.9%:

## Առաջարկություններ

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը պետք է ուշադրություն դարձնի Շիրակի գյուղական համայնքների նշված խնդրին՝ կրթության հասանելիության առումով: Խնդիրն, ընդհանուր առմամբ, ուշադրության է արժանի բոլոր երեք մարզերի գյուղական բնակավայրերի համար:

# ԱՇԽԱՏԱՆՔ

**Աշխատաշուկայի մասնակցություն**

Աշխատաշուկայում մասնակցության ցուցանիշը վերաբերում է այն ՏՏ-ներին, որոնցում աշխատանքային տարիքի (15-75) անձանց կեսից ավելին չի աշխատել: Զրկանք կրող չեն համարվել այն ՏՏ-ները, որոնցում չի եղել աշխատունակ տարիքի որևէ անձ:

*Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



# ԱՇԽԱՏԱՆՔ

**Երկարաժամկետ գործազրկություն**

Երկարաժամկետ գործազրկության ցուցանիշով ՏՏ-ն համարվել է զրկանք կրող, եթե աշխատունակ տարիքի որևէ անդամ մեկ և ավելի տարի գործազուրկ է եղել և ակտիվ աշխատանք է փնտրում: Զրկանք կրող չեն համարվել այն ՏՏ-ները, որոնք աշխատանքային տարիքի անդամներ չեն ունեցել:

*Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



# ԱՇԽԱՏԱՆՔ

**Արժանապատիվ աշխատատեղ**

Արժանապատիվ աշխատատեղերի ցուցանիշով ՏՏ-ն համարվել է զրկանք կրող, եթե բոլոր աշխատող անդամները կամ ինքնազբաղված են եղել, կամ նպաստել են ընտանեկան բիզնեսին: Այս ցուցանիշով ինքնաբերաբար զրկված են համարվել նաև այն ՏՏ-ները, որոնք զրկանք կրող են համարվել աշխատանքի նախորդ երկու ցուցանիշներով: Աշխատունակ տարիքի անդամ չունեցող ՏՏ-ները զրկանք կրող չեն համարվել:

*Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



# ԱՇԽԱՏԱՆՔ

## Արժանապատիվ աշխատատեղ

*Թվարկվածներից ո՞րն է լավագույնս համապատասխանում Ձեր զբաղվածության կարգավիճակին:*



# ԱՇԽԱՏԱՆՔ

## Ամփոփում

Աշխատաշուկային մասնակցությունը երեք մարզերի համար զրկվածության կարևորագույն ցուցանիշներից է: Աշխատունակ տարիքի (15-75) անձանց կեսից ավելին աշխատաշուկայի մաս չի կազմում (55.9%), իսկ 39.6%-ը երկարաժամկետ գործազուրկ է:

Գյուղացիական տնտեսություններում առավել մեծ թվով ինքնազբաղված անձինք գրանցվել են Լոռու գյուղական համայնքներում (51.2%), Սպիտակում (30.8%) և Շիրակի գյուղական համայնքներում (26.2%):

## Առաջարկություններ

Աշխատանքը երեք մարզերի համար հիմնական խնդիրն է: Աշխատաշուկայում ներգրավվածության ապահովումը կօժանդակի նաև բազմաչափ աղքատության և ընդհանուր առմամբ աղքատության դեմ պայքարին, ուստի Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը խորհուրդ է տրվում ջանքերը կենտրոնացնել Լոռու, Շիրակի և Տավուշի վրա՝ աշխատատեղերի ստեղծման և արժանապատիվ աշխատատեղերի ընդլայնման համար: Ավելին, քանի որ Լոռու, Շիրակի գյուղական համայնքների և Սպիտակի ֆերմաներում առկա են ինքնազբաղված անձանցով բազմաթիվ ՏՏ-ներ, հենց նրանք էլ կարող են դառնալ նպատակային աջակցության հատուկ խումբ՝ ստեղծելու բարելավված գյուղատնտեսությունների վարման հնարավորություններ (սա նաև հավանական առաջարկություն է ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՄԱԿ ՊԳԿ) համար):

# ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## Առողջապահական ծառայությունների մատչելիություն

Առողջապահական ծառայությունների մատչելիության ցուցանիշը բացահայտում է այն ՏՏ-ները, որոնք չունեն ֆինանսական միջոցներ բժշկական հաստատությունում անհրաժեշտ առողջապահական ծառայությունների դիմաց (բացառությամբ ատամնաբույժի) վճարելու համար, ինչպիսիք են թեստերը, հետազոտությունները և բժշկի կողմից նշանակված ընթացակարգերը: ՏՏ-ները զրկանք կրող են համարվել, եթե ՏՏ-ի որևէ անդամ ի վիճակի չի եղել իրեն թույլ տալ նման ծառայություններ նախորդ 30 օրվա ընթացքում. այն ՏՏ-ները, որոնցում չի եղել անդամ, ով վերջերս դիմել է բժշկի, չեն համարվել զրկանք կրող:

*Զրկանք կրող ՏՏ-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



# ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

**Սովորական գործունեության դադարեցում**

Տնային տնտեսության սովորական գործունեության դադարեցման ցուցանիշը վերաբերում է առնվազն մեկ անդամ ունեցողներին, ովքեր դադարեցրել են սովորական գործունեությունը հիվանդության, վնասվածքի կամ վատ առողջության պատճառով:

*Չրկանք կրող ՏՏ-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



# ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## Առողջապահական ծառայությունների հասանելիություն

Առողջապահական ծառայությունների հասանելիության ցուցանիշը վերաբերել է գյուղական բնակավայրերի այն SS-ներին, որոնք չեն ունցել հասանելիություն առողջապահական հաստատություններ, շտապ օգնության ծառայություններ կամ իրենց հարևանությամբ գործող դեղատներ: Այն SS-ները, որոնք չեն ունեցել 30 րոպեի ընթացքում կամ ավելի քիչ ժամանակում հասանելի տրանսպորտային միջոցներով դրանց հասանելիություն, համարվել են զրկանք կրող: Քաղաքային SS-ները զրկված չեն համարվել:

*Զրկանք կրող SS-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



# ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

**Առողջապահական ծառայությունների որակ**

Այս ցուցանիշը չափում է այն ՏՏ-ները, որոնք բավարարված չեն եղել առողջապահական ծառայությունների որակով:

*Չրկանք կրող ՏՏ-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

# ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## Ամփոփում

Առողջապահական ծառայությունների հասանելիությունից զրկվածությունը շեշտվել է գյուղական բնակավայրերում՝ 60.1% Տավուշի գյուղական, 63.6% Լոռու գյուղական և 54.4% Շիրակի գյուղական համայնքների համար: Հետաքրքիր է, որ Լոռին, Շիրակը և Տավուշը ամենախոցելիներն են եղել CVI-ի (COVID-19 խոցելիության ինդեքս) առումով:

## Առաջարկություններ

Առողջապահության նախարարությանը խորհուրդ է տրվում ուշադրություն դարձնել Լոռու, Շիրակի և Տավուշի գյուղական համայնքներում առողջապահական ծառայությունների հասանելիության խնդրին, որոնք, բնականաբար, COVID-19-ի խոցելիության առումով ամենաանապահով համայնքներն են:

# ՔՈՎԻԴ-19-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

- ՔԽԻ-ի հաշվարկում ներառվել է չորս չափականություն: Յուրաքանչյուր չափականություն ունի ցուցանիշների և հարակից հարցերի իր հավաքածուն յուրաքանչյուր ցուցանիշի համար՝ Հայաստանում աղքատության համատեքստի հիման վրա:
  - **Աշխատանք**
    - *Ցուցանիշներ.* (1) Աշխատաշուկայում մասնակցություն, (2) Երկարաժամկետ գործազրկություն, (3) Արժանապատիվ աշխատանք
  - **Կենցաղային ծառայություններ**
    - *Ցուցանիշներ.* (1) Ինտերնետի հասանելիություն, (2) Կենտրոնացված ջրային համակարգին շարունակական հասանելիություն, (3) Կենտրոնացված մաքրություն և աղբահանություն, (4) Առողջ ջեռուցում
  - **Տնային տնտեսությունների կազմ**
    - *Ցուցանիշներ.* (1) Գերբնակեցում, (2) Բազմասերունդ ՏՏ
  - **Առողջապահություն**
    - *Ցուցանիշներ.* (1) Տարիք, (2) Առողջապահական ծառայությունների հասանելիություն, (3) Առողջապահական ծառայությունների մատչելիություն
- Այս բոլոր ցուցանիշները միաժամանակ օգտագործվել են ԲԱԻ-ի հաշվարկման համար, բացառությամբ երեքի՝ ինտերնետ հասանելիության, բազմասերունդ տնային տնտեսությունների և տարիքի:

# ՔՈՎԻԴ-19-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍՆ ԸՍՏ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ

**ՔԽԻ չափականություններն ըստ գործոնների**

12 ցուցանիշների շարքում Քովիդ-19-ի նկատմամբ խոցելիությունն ամենամեծն է տարիքի, արժանապատիվ աշխատանքի, աշխատաշուկայի մասնակցության, կենտրոնացված մաքրության և աղբահանության հասանելիության ցուցանիշներով:




*Խոցելի SS-ների բաշխումը բոլոր երեք մարզերով*

# ՔՈՎԻԴ-19-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ (ՔԽԻ) ՉԱՓՈՒՄԸ

## Ընդհանուր թվերն ըստ մարզերի և համայնքների

*Խոցելի SS-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



# ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Ինտերնետ

Ինտերնետային ծառայություններ մատուցողից ինտերնետ կապ չունեցող ՏՏ-ները համարվել են խոցելի: Բջջային հեռախոսի միջոցով ինտերնետ ծառայություններ մատուցողները չեն համարվել ՏՏ ինտերնետ ծառայություններ մատուցողներ:

*Խոցելի ՏՏ-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



# ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

**Բազմասերունդ տնային տնտեսություններ**
ՏՏ-ները համարվել են բազմասերունդ և խոցելի, եթե նրանցում բնակվում են երեխաներ (0-15 տարեկան) և ծերեր (65+ տարիքի անձինք):

*Խոցելի ՏՏ-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



# ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

**Տարիք**
SS-ները համարվել են խոցելի, եթե SS որևէ անդամ եղել է 60-ից բարձր:

*Խոցելի SS-ների բաշխումն ըստ*

*մարզերի*




*համայնքների*



# ԱՌԱՋ ՆԱՅԵԼՈՎ

Պետք է գիտակցել Հայաստանում համայնքային ԲԱԻ-ի և բազմաչափ Քովիդ-19-ի նկատմամբ խոցելիության ինդեքսների կարևորությունը.

- Առաջին հերթին, այն ցույց տվեց երեք մարզերի գյուղական համայնքների, ինչպես նաև Սպիտակ քաղաքի վրա բևեռվելու առաջնահերթությունը:
- Ավելի կոնկրետ՝ առօրյա սննդի և հագուստի համար գումար չունենալու խնդրի դեմ պայքարելու համար առաջնահերթություն պետք է տրվի Լոռու մարզին և Սպիտակին:
- Երեք մարզերը, հատկապես Լոռին, կարող են օգտվել սնուցման հիմունքների վերաբերյալ քաղաքացիների համար դասընթացներից:
- Համայնքների մշակութային կյանքը պետք է բարելավվի:
- Կոմունալ ծառայությունների կառավարման ոչ դրամային ասպեկտների վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը (գիտակցելը, թե ինչպես են էներգիայի, թափոնների և ջրօգտագործման տարբեր մետրիկաներ ազդում ՏՏ-ների/բիզնեսի վրա) կարող են կարևոր լինել երեք մարզերի ՏՏ-ների համար:

# ԱՌԱՋ ՆԱՅԵԼՈՎ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

- Առողջ ջեռուցումն ու տաք հոսող ջուրը երկու կարևորագույն բնակարանային խնդիրներն են, որոնք առաջնահերթ հասցեագրման կարիք ունեն երեք մարզերում:
- Լոռու, Շիրակի և Տավուշի գյուղական շրջաններում առողջապահական ծառայությունների հասանելիությունը, ինչպես նաև այդ համայնքների՝ Քովիդ-19-ի խոցելիության առումով ամենաանապահով լինելու հանգամանքն առաջնահերթ հոգածության կարիք ունի:
- Երեք մարզերի համար հիմնական խնդիրներից է աշխատանքը/զբաղվածությունը: Աշխատաշուկային մասնակցությունը կօժանդակի նաև պայքարել բազմաչափ աղքատության և ընդհանուր աղքատության դեմ:

Հետազոտության արդյունքների օգտագործումը և դրա հիմնական նպատակի՝ Հայաստանի երեք ամենաաղքատ մարզերում բազմաչափ աղքատության կրճատման շուրջ 8 քաղաքականություն մշակողների միջև համակարգված համագործակցությունը չափազանց կարևոր է:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

CRRC Armenia

ECONOMIC DEVELOPMENT RESEARCH CENTER EDRC

EURASIA PARTNERSHIP FOUNDATION

Հրանտ Մաթևոսյան
HRANT MATEVOSSIAN FOUNDATION

*This publication was produced with the financial support of the European Union. Its contents are the sole responsibility of CRRC-Armenia and do not necessarily reflect the views of the European Union.*

*Այս հրապարակումը պատրաստվել Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամ կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:*